ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հուշագրությունը Հայ Գրականության մեջ

ԱՆՈՒՆ,ԱԶԳԱՆՈՒՆ՝ Փամբուկյան Կարինե

ԴՊՐՈՑ՝ Ավշարի միջնակարգ դպրոց

ԴԱՍԱՎԱՆԴԱԾ ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց լեզու եվ գրականություն

Ք.Արարատ 2022

Բովանդակություն

1. Օգտագործված գրականության ցանկ 26
2. Նախաբան 2
3. Եղիշե Չարենցը ժամանակակիցների հուշերում 4
4. Ժամանակակիցների հուշերը Վահան Տերյանի մասին 9
5. Ժամանակաիցների հուշերը Պարույր Սեվակի մասին 14
6. Հուշագրությունը Զորյանի ինքնակենսագրական վեպում 17
7. Վերհուշը Ակսել Բակունցի ստեղծագործություններում 19
8. Եզրակացություն 24
9. Բովանդակություն 1

ՆԱԽԱԲԱՆ

Հայ գրականության մեջ շատ են գրվել հուշագրություններ: Ժանրային առումով հուշագրությանը մոտ ստեղծագործություններ հայտնի են դեռևս 5-ր դարի հայ գրականությունից (ժամանակագրություն,վարքագրություն և այլն) : Հուշագրական են Կորյունի <<Վարք Մաշտոցի>>,Եղիշեի <<Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին>> երկերը:Հայ հուշագրական գրականության դասական նմուշներն են Պերճ Պռոշյանի <<Հուշիկներ>>,Ղազարոս Աղայանի <<Իմ կյանքի գլխավոր դեպքերը>> գրքերը:Նոր շրջանի հայ գրականության մեջ հուշագրական բնույթ ունեն Վահրամ Փափազյանի <<Հետադարձ հայացք>> եվ <<Սրտիս պարտքը>> երկերը, Գարեգին Բեսի <<Հուշանովելները>>,Նվարդ Թումանյանի հուշերը Հովհաննես Թումանյանի և Վահան Տերյանի մասին և այլն:

Հուշագրության տարատեսակներ են ինքնակենսագրությունը (Ստեփան Զորյան <<Մի կյանքի պատմություն>>) եվ ճանապարհորդական նոթերը(Սիլվա Կապուտիկյանի <<Քարավանները դեռ քայլում են>>):Ինքնակենսագրական, հուշագրական բնույթի են Գուրգեն Մահարու <<Մանկություն>>, <<Պատանեկություն>>, <<Երիտասարդության սեմին>>, <<Երիտասարդություն>>,<<Ծաղկած փշալարեր>>,<<Այրվող այգեստաններ>> ստեղծագործությունները եվ <<Հուշեր Եղիշե Չարենցի մասին>> ժողովածուն:Շատ ստեղծագործություններ ունեն աղբյուրագիտական նշանակություն:

Մեր ժամանակներում, երբ հեռախոսն ու համացանցը, հաղորդակցության արագագնա միջոցները, առհասարակ արագահոս կյանքը մարդկանց կենցաղից ավելի ու ավելի են դուրս մղում հիշատակարանը, նամակագրությունը— հուշագրությունը ձեռք է բերում ըստ ամենայնի կարևոր դեր: Այս համընդհանուր երևույթի կողքին 20-րդ դարի սկզբներին ձևավորված հայ մտավորականներին ու

գործիչներին վերա բերող հուշերի կարևորությունը կրկնապատկվում է հայտնի այլ պատճառներով:

Իմ հետազոտական աշխատանքը բաղկացած է հետևյալ գլուխներից.

1.ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

2.ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

3.ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵԱԿԻ ՄԱՍԻՆ

4 ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊՈՒՄ

5.ՎԵՐՀՈՒՇԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Համաշխարհային գրականության պատմության մեջ կան անուններ,որոնց մասին խոսելիս պատկառանքով ես լցվում:

Այդպիսի արվեստագետները ծնվում են հարյուր տարին մեկ անգամ ու ապրում են հավերժ:Այդպիսի մեծ ու եզակի անհա_տականություններից է հայ գրականության հսկան՝ Եղիշե Չարենցը:

Չարենցն իր հուշարձանը կանգնեցրեց իմաստուն խոհերից,իր բորբոքված սրտի անկեղծ երգերից:Նա ապրեց չորս տասնամյակների ակնթարթային կյանք՝ հարուստ ու բովանդակալից ,վսեմ ու դրամատիկ:

Լինելով ռուս եվ համաշխարհային գրականության գիտակ՝ նա իր ստեղծագործություններում հոգևոր առնչություններ է ունեցել Հոմերոսի ու Դանթեի,Պուշկինի,Գոգոլի ու Աբովյանի հետ:

Ըստ Պարույր Սևակի՝ <<Ով է Չարենցը հարցին պատաս-խանելու համար մենք պիտի հատուկ ուշք դարձնենք մի երևույթի վրա: Գրականության պատմությունը չանցնող հարգանքով է հիշում Դուրյանին ու Մեծարեցին,ովքեր 20-21 տարեկանում ստեղծել են գլուխգործոցներ:Իսկ մեր մտքով անցել է Չարենցին էլ դասել նրանց շարքում:Ընամենը 18 տարեկանում նա գրել է քնարական այնիսի գլուխգործոցներ,որոնց տակ իր անունը սիրով կգրեր իր ուսուցիչը՝ Տերյանը>>: 1921թ. Ծնվեց Չարենցի նոր գլուխգործոցը,որը թերևս նրա ստեղծագործության ամենա_սրտառուչ ու հոգեհարազատ էջն է:Չարենցը սրտալի երգ էր հյուսում հայ մարու համար,վերաարձնում նրան իր հոգևոր ու հուզական աշխարհի հարստությունը:Նա իր հոգու մեջ հավաքել էր հայ գրականության դարավոր փորձը,նուրբ լիրիկան,Նահապետ Քուչակի ու Սայաթ-Նավայի գրական ավանդները:

<<Ինչքան,որ հուր կա իմ սրտում-բոլորը քեզ,

Ինչքան կրակ ու վառ խնդում-բոլորը քեզ... >>-

տողերը Սայաթ-Նովայից ժառանգած հումանիզմի արտահայտությունն էին:

<<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը բանաս-
տեղծի խոհերի ու զգացմունքների բարձրակետն է:
_Չարե՛նցը,Չարե՛նցը,-գրում է Վիլյամ Սարոյանը <<Ես իմ անուշ Հայաստանի
արևահամ բառն եմ սիրում...>>:Անոր չհանդիպած գիտեի այս քերթվածը:Սկսած էի
արտասանել Ամերիկայի մեջ:Զայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին,մեր հողին
նվիրված ամենայն գեղեցիկ երգը,գովաբանակն աղոթքը:<<Հայր
մեր >>-ին նմանվող աղոթք մը:
1927-ին Չարենցի արձակը համալրվում է,, Երևանի ուղղիչ տնից՛՛ հուշագրու-
թյամբ,որը աչքի է ընկնում բնավորություններ բացահայտելու վարպետությամբ:
Լինելով ետանհանգիստ որոնող արվեստագետ՝ Չարեցը միշտ ուսումնասիրում էր
համաշխարհային գրականության փորձը: Նրա որոնումների արդյունքը եղավ
<<Էպիկական լուսաբաց>> ժողովածուն: Գիրքը ունի միակ բարեկամիս՝ Ակսել
Բակունցին, նվիրումը: 1934-ին նշանավոր նկարիչ Հակոբ Կոջոյանի ձևավորմամբ
լույս տեսավ <<Գիրք ճանապարհի>> ժողովածուն: Այս մասին Գուրգեն Մահարին
գրում է. <<Այս գրքով նա արժևորեց թե՛ մեր ժողովրդի անցած պատմական
ճանապարհը, թե՛ պոեզիայի և թե՛ սեփական ճանապարհը և գրեց իր
բանաստեղծական կտակը տաղերի ու խորհուրդների ձևով: Ժողովածուն դարձավ
բանաստեղծի կարապի երգը: 1934-37 թվականներին նրա ապրած ողբերգության
մասին հստակ պատկեր եք տալիս Չարենցի բանաստեղծությունները:

<< Եղե՞լ է արդյոք անցյալում, հնում,
Որ պոետները երգերի վերև
Իբրև վերնագիր լոկ թվեր գրեն...>>

Անգամ այս խռոված հոգեվիճակում նա պահպանում է իր հոգեկան աշխարհի կորովն
ու արիությունը:

<<Շնորհակալ եմ, Տեր, այն ամենի համար,
Ինչ տվեցիր դու ինձ կյանքում իմ խեղճ:>>

ԵՎ ապա. <<Ինձ չի ընկճել կյանքում և ոչ մի ծանր քար
ԵՎ ոչ մի կոճղ ընկած խոփիս առջև:>>

<<Հուշեր Չարենցի մասին>> էջ 495

ԵՎ ապա Իզաբելլա Չարենցը գրում է. <<Ծանր մղձավանջային ապրումների ու հուսահատության մեջ անգամ Չարենցը գիտակցում էր իր մեծությունը և հավատում անմահությանը.

<<Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին ու հին տրտմություն
Կամ լուր աղետի թերթերում գրած... >>

ԵՎ մի վերջին հույսով նա հավատում էր.

<<Բոլորի սրտում կկանգնի հանկարծ,
Անհաղձ, ինչպես հեռավոր լուսին
Իմ դեմքը արդեն հավիտյան հանգած...>>

Իր կյանքի վերջին պահին նա չմոռացավ իր երգը ուղղել ժողովրդին անսահմանորեն նվիրված արվեստագետներին: Նա կարողացավ նաև արժանավայել գնահատել ինքն իրեն:

<<Քո անունն է Չարենց,
Ասնանսն է արև,
ԵՎ բառն՝ <<հանճարեղ>>... >>

Սրանք Չարենցի վերջին տողերն են՝ ճշմարիտ ու անհերքելի:

Հրանտ Թամրազյանը նրա մասին գրել է.

<<Բնությունը շռայլ էր նրա նկատմամբ, բախտը՝ ժլատ: Բնությունը նրան օժտել էր բազում շնորհներով, բախտը չէր սահմանել երջանկություն:>>

Նա այն արտասովոր բանաստեղծներից էր, որոնք Եսենինի խոսքով ասած, աշխարհ են գալիս մահվան կնիքը ճակատին: Նման մարդիկ ծնվում և ստեղծվում են այլոց երջանկության համար և դրանց կյանքի ուղին լուսավորում անձնական կյանքի հրդեհով: Իսկ Մարտիրոս Սարյանն ասել է.

<< Ասուպի նման ծնվեց ու մի ակնթարթում կիզվեց Չարենցը: Բայց հոգու լույսը մնաց հավերժաբար և գնալով պայծառանում է:>>Ամենաբնութագրականը Չարենցի համար Դավիթ Գասպարյանի խոսքերն են, գնահատանքի խոսքերը.

<<Հուշեր Եղիշե Չարենցի մասին>> գրքից Մ.Սարյան << Չարենցի հետ>> էջ 177

<<1937 թվականի նոյեմբերի 28-ին՝ առավոտյան, բանտի հիվանդանոցում օրեր շարունակ տնած անգիտակից վիճակից հետո բոլորից լքված ու անօգնական իր մահկանացուն է կնքում Եղիշե Չարենցը՝ ժամանակի մեծագույն բանաստեղծը: Մարտին լրացել էր նրա 40 տարին: Տարիներ շարունակ տնած դաժան ողբերգության գլխավոր դեմքը արյունաքամ և ուժասպառ հեռացավ աշխարհից:

Իսկ մեղադրանք նրան ներկայացվում էր 67,68 և 78 հոդվածներով: Այդպիսի հոդվածներով գնդակահարվում են: Ուրեմն Չարենցը եթե չմահանար, պիտի գնդակահարվեր: Իսկ ճակատագրին Չարենցն ընդառաջ էր գնում ոչ միայն միայնակ ու հալածական, այլ նաև անբասիր ու խրոխտ պահվածքով, հարցաքննություններին ցուցմունք-վկայություններով չարատավորելով իր ժամանակակիցների անունն ու գործը: Կյանքից հեռանում էր ոչ միայն մեծ բանաստեղծը, այլև, ըստ ամենայնի, հերոսական մարդը:

Նրան թաղեցին գիշերը, բոլորից գաղտնի, աչքից հեռու, Երևանից Էջմիածին տանող խճուղու ձախ կողմում՝ Հրազդանի աջ ափին: Նա ոչ վաղուց արդեն լեգենդ էր դարձել իր ժողովրդի համար, շարունակեց այդպես ապրել իր նոր հարությունը և դրանից հետո:

...ԵՎ ինչքան էլ իր բառերով ասած <<մեր ամբողջ կուլտուրական մակարդակի ցածր լինելը >> ազդեր նրա վրա, ինչքան էլ գավառական կյանքի փոքր կրքերն ու չարությունները չհանդուրժեին իրենց մեջ ապրող հանճարին,ինչքան էլ քաղաքական տարբեր ու միշտ էլ անհիմն քաղաքական մեղադրանքներով կասեցնեին նրա արծվային թռիչքը, ինչքան էլ մահվան սարսափի տակ լռեցնեին նրան, ի վերջո տային մահու բերան, այնուամենայնիվ ՉԱՐԵՆՑԸ ՀԱՂԹՈՂՆ Է,ՊԱՐՏՎՈՂԸ ՉԷ, ՄՆԱՑԱԾ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԻՐ ՕՐԵՐԻ ՏԵՐԸ ԻՆՔՆ Է ՄՅՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ, ԵՎ ՄԱՀՆ ԷԼ ՄԱՀ ՉԷ, ԱՅԼ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅԼ ԱՆՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՄԻ ԵՐԹ՝ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՈՎ:>>

Դավիթ Գասպարյան <<Ողբերգական Չարենց>>

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

/ ՄԱՐԴ /

/ ՄԵԾ ՍԻՐԱՀԱՐ / / ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ /

/ԱԶՆԻՎ/

/ ԲԱՆԱՍՏԵՂԾ /

/ ՍԻՐՈ / / ՀԱՅՐԵՆԻՔԻ /

/ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ /

ԿԱՏԱՐՅԱԼ

Ժամանակակիցների հուշերը Վահան Տերյանի մասին

Զարմանալի մի գաղտնիք կա Տերյանի պոեզիայում. ժամանակի հետ չեն հնանում նրա թե՛ բանաստեղծությունը, թե՛ լեզուն. մեկդարյա հեռավորությունը ավելի է ընդգծում տերյանական խոսքի թարմությունն ու եզակիությունը: Տերյանը գրել է մարդկային տրտմության, անուրջի, անհուսության, երկվության, այլաշխարհային տեսիլների, երազանքների, տարտամ, անձն ցանկությունների՝ բազումներին անհասկանալի, բայց Հանճարին, միայն իրեն հասկանալի լեզվով, որը նա իր հոգում վերածել է արքայական հայերենի, դրանով երկրային և վերերկրային գոյություններն լեզուները զոդելով միմյանց...

Բարեբախտություն է, որ Տերյանը, բանաստեղծական առաջին քայլերն անելիս չափազանց գրագետ էր. սիրահարված էր Հին Հայերենին՝ գրաբարին, գիտակ էր Հայ, ռուսական և եվրոպական պոեզիայի: Նա ճիշտ է կռահել իր կոչման իմաստը. գրել ի՛ր զգացումների, ի՛ր ապրումների մասին, ամբողջովին տարրալուծվել բանաստեղծության մեջ, որովհետև մեծ անհատականության դրոշմն է հավերժ կենդանի պահում արվեստի ցանկացած գործ:

Բնատուր մեծ տաղանդ, մայրենի լեզվի խորը իմացություն և նրբագույն ճաշակ,- ահա Տերյանի պոեզիայի մշտնջենականության գաղտնիքը:

Ոչ մի գրող նոր լեզու չի ստեղծում, նա եղած լեզվից արարում է իր անհատական լեզուն. Վահան Տերյանը հայերենից վերստեղծեց մեր ներաշխարհի լեզուն՝ տ ե ր յ ա ն ե ր ե ն ը... Այդ լեզվով է այսօր մտածում ու խոսում հայության սիրտն ու հոգին:

Նվարդ Թումանյանը Տերյանի մասին գրում է.

Նրա հոգին նուրբ էր ու քնքուշ, իր Գանձայի ծաղիկների նման՝ նրբին ու զգայուն:

Սիրտը ջերմ ու հուր, իր երկրի սարե րի նման՝ կրակ ու հրաբուխ ու էդ

Վահան Տերյան «Ընտրանի» Է ջ 495 «Բանաստեղծ ու մտերմուհին»

սարե րի նման էլ «լայն ու բաց», բայց միշտ մի թախծոտ տխրությամբ համակված, ինչ պես Հայրենի սարերը մշուշապատ: Նա սի՛րտ էր համակ ու զգացմունք, միշտ տարվող ու գերող, վառվող ու այրվող, թերևս դրա համար էլ նրա սիրտը միշտ ցավով էր ու ցավակիր:

Նրա հոգին այդ տեսակ հոգիներից էր և զրույցների ժամանակ միշտ անկեղծ էր ու բաց, ազատ, հարազատ: Նա ներքին ապրումի, ներքին աշխարհի մարդ էր, սիրում էր մոտը, ինտիմը և իր մոտ ու հարազատ շրջանում էր, որ բացվում էր Տերյանը:

Սրտիս հուշերը բարի են դեռ,
Եվ քո անվամբ է,անուշ Նվարդ,
Որ մայիսին այս դառն ու անվարդ
Սրտիս հուշերը բարի են դեռ:
Թեև իջնում է հոգուս ըստվերը
Եվ չեմ սպասում գալիխից վարդ,
Սրտիս հուշերը բարի են դեռ
Քնքուշ անվամբ քո,անուշ Նվարդ:
Պիտի մնա միշտ ժպտուն ու վառ
Գարնան Թիֆլիսն իմ հեռու սրտում,
Որքան էլ գալիքն իջնի տրտում-
Պիտի մնամիշտ ժպտուն ու վառ.
Որքան էլ սրտիս տիրե խավար,
Որպես նայվածիդհուրը ցայտուն,
Պիտի մնա միշտ ժպտուն ու վաժ...

Եղիշե Չարենցը Տերյանի մասին գրել է.

Մի տարի է մոտ, որ ես Գրական թանգարանից՝ Խանջյանի կարգադրությամբ վերցրել եմ /1934 թ./ Վահան Տեր յանի ձեռագրերը մի զարմանալի՜ - քնքուշ և խնդագին զգացմունք եմ ունենում յուրաքանչյուր անգամ, երբ հիշում եմ, որ այնտեղ, գրասեղանիս դարակում, պահված են Տերյանի, հասկանո՞ւմ եք, իսկական նրա ձեռագրերը... նրա ձեռքով գրված այս թերթիկները... Երբ անչափ տխուր եմ լինում, հասնում եմ և նայում, կարծես արեգակն է պահված իմ գրասեղանի դարակում... Այդ մետաքսյա թերթիկները ծածկված չինական սև մելա նով, գրված չքնաղ, ազնվական գրերով...

Զարմանալի մաքուր և գեղեցիկ ձե ռագիր է ունեցել այդ մարդը: Ձեռագիրն անգամ նուրբ է, ինչպես նրա ողջ ստեղ ծագործությունը նուրբ ու մաքուր: Իմ կյանքի ամենամեծ խնդությունն է դա հանել մեկ-մեկ այդ ձեռագրերը և նայել...

Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու,
Ու լռել է երգը քո արդեն հիմա,
Բայց զգում է սիրտս, որ նորից կգաս դու,
Երբ իջնի գիշերը ու անձրևը լա:

Երբ իջնի գիշերը ու անցած հուշերը,
Անցածի փշերը դառնորեն խոցեն—
Ո՛րբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե:

Որբ, մենակ կգաս դու և նորից քո երգը

Վ.տերյան «Ընտրանի» Է ջ 498 «Ավագ և կրտսեր գրչաեղբայրների խոստովանությունը»

Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր.
Անարև սրտում մեր կվառե քո երգը Երազներ անմար ու ցնորքներ լուսե:

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մ ո տ ես,
Մորմոքող հրի պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ, հեռու ընկեր իմ,օ,Վահան Տերյան...

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԸ ԿԱՐԴԱԼԻՍ



Ի՞նչ մտքեր ծնվեցին	Ի՞նչ զգացիք

Ի՞նչ գույներ տեսաք	Ի՞նչ ձայներ լսեցիք

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած.
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Սեվակի մահից անցել է ուղիղ 50 տարի:Սա բավական ժամանակ է որևէ գրողի կենսունակությունը ստուգելու համար:Նրա ստեղծագործությունը հրաշալի է բնութագրել Անդրանիկ Ծառուկյանը.

Ոչ ոքի արժանիքեն բան պակասեցուցած կըլլանք, երբ ըսենք թէ Չարենցեն ետք Հայտնվող ամենեն ուժեղ խառնվածքը եղավ Պարույրը:

Ինչ որ գրե Պարույր, անձնական ապրումներ, ազգային ցավեր, թե իմաստասիրական խոհեր,միշտ պիտի խոսի առաջին դեմքով երկրորդ դեմքի մը հետ, ու եթե չգտնե իսկ, ինքն է որ Հարցումը պիտի ստեղծե, պատասխանելու Համար ինքն իրեն, ջղային, անՀամբեր, կովազան միանգամընդմիշտ ձերբազատ չափ ու Հանգի կաշկանդումեն, իր ավյունին Հորդ թափը բավ Համարելով և չափին և Հանգին և երաժշտականության: Անդադրում՝ այդ «վեճն» է, ներքին այդ «ինքնակոիվը»՝ որուն շնորհիվ միայն կրնա աճիլ և մոլեգնանալ: Խաղաղ, հեզասահ և նրբակերտ տողերու կատարելությամբը ներգործող արվեստը իրը չէ: Պրկումի, լարումի և Հարաճուն դինամիզմի ուժով, արգելքի դեմ՝ աշտանակվելով միայն կրնա արժեցնել Պարույրը իր քերթվածը, և ծովափին արգելիչ խարակները պետք է ցցվին առջևը, որպեսզի անոնց դեմ փշրվելով կարենա ստեղծել վարեն վեր արձակվող ջրվեժին ցայտքը:

Հովհաննես Մելքոնյանը գրում է.հունիսի տասնյոթին, Պարույր Սևակի մահվան բոթն առնելով, - ինչո՞ւ հիշեցի Չարենցի եղերական վախճանը, Բակունցի սրտակեղեք գնդակահարությունը...

Մեծերը նման լինելով իրենց ապրած կյանքով նման են լինում իրենց վերապահված մահով... Երբ փաստացի ապա ցույցները դեռևս հայտնի չեն՝ չկան, մարդու հոգու զգացողությունը և սրտի վկայությունը անսխալական ապացույցներ են: Իզուր չէ, որ իմ ժողովրդի խոսքի մեջ մի այսպիսի արտահայտություն կա՝ «սիրտս վկա ում է..»: Այդ օրը սիրտս վկայում էր, որ ավտոաղետը պետականորեն ծրագրված է եղել, իսկ հիմա վկայում ու հաստատում են փաստերը, ո րոնցից զարհուրելին հետևյալն է. ավտովթարային սպանությունը «ա պահով» ի կատար ածելու համար 1971 թվականի հունիսի 17-ին մայ րուղին երկու կողմից կողմնակի ավտոմեքենաների համար փակված է եղել... Այս բանը հաստատող մյուս վկայությունները թողնելով հետագա էջերին՝ այստեղ բերեմ մեկը. բանաստեղծի որդու գրավոր ցուցմունքում այսպիսի երեք նախադասություն կա. «Հեշտությամբ անցանք ոլորա պտույտ ճանապարհներից: Ամայի էր: Առաջից մի բեռնատար ավտո ճամփի մեջտեղից էր գնում»: Չտեսնված բանուկ մայրուղին ինչպե՞ս եղավ, որ այդ օրվա առավոտի աշխույժ ժամերին «ամայի էր» և «առջևից մի բեռնատար ավտոճամփի մեջտեղից էր գնում»:

Այս ահեղ դարը ինքը ինձ ծնեց
Եվ... քանի անգամ կործանել ջանաց
Իր այն աչքաբաց բիճերի ձեռքով,
Որ նրա աչքի յուղն էին կերել,
Եվ ուզում էին ինձ՝ հարազատիս,
Խորթ ցույց տալ նրան...

ՀԵՂԻՆԱԿԻ ԱԹՈՌ

Ու՞մ նկատի ունեիք,երբ ասում էիք.
-Հանեցե՛ք ձեր դիմակները:

Ո՞վ է եղել Ձեր ամենամեծ սերը:

Եթե նորից ապրեիք,ինչպե՞ս կապրեիք

Ո՞վքեր են աշխարհի շալակը ելած մարդիկ

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊՈՒՄ

«Մի կյանքի պատմություն» վեպը Ստ. Զորյանն սկսել է գրել 1919 թ., սակայն պատմական արագընթաց իադարձությունները ժամանակա վորապես հետի պլան մղեցին աշխատանքը վեպի վրա: «Մի կյանքի պատմությանը» գրողն անդրադարձավ 20-ական թվականների վերջին, վեպի առաջին մասը առանձին գրքով լույս տեսավ 1935 թ., իսկ երկ րորդ մասը՝ 1939 թ.:

Վեպն սկսվում է փոքրիկ Սուրենի ամենավաղ հիշողությամբ: Նա պահարանից մի կտոր շաքար է վերցնում ուտում... Այս առիթով հոր և հորեղբոր միջև սկսած վեճը վերջանում է ընտանիքների բաժանումով: Այնուհետև վեպում ծավալվում է այդ ցավագին թեման, որ մերթ ուժեղանում է, մերթ թուլանում:

Ինքնակենսագրական վեպի սյուժեն սովորականից տարբեր կերպ է զարգանում: Այստեղ չկա սովորական վիպական կոնֆլիկտ, որի լուծու մից հետո վեպը վերջանում է: Ինքնակենսագրական վեպում մեծ ու փոքր կոնֆլիկտները հաջորդում են իրար, իսկ վեսը շարունակվում է, ինչպես անհատի կենսագրությունն է շարունակվում կյանքի հունով: Ինքնակենսագրական վեպի ժանրով է պայմանավորված նաև կերպարների բնույթը: Փակվում է գլխավոր հերոսի կյանքի մի շրջանը, և դրա հետ վիպական գործողությունների ոլորտից դուրս են մնում շատ կերպարներ, որոնք կյանքի մի փուլում ուղեկցել են գլխավոր հերոսին: «Մի կյանքի պատմության» մեջ այդպիսիք են Զաքար վարժապետը,Մադաթ բիձան, դպրոցական ուսուցիչները: Հին կերպարներին փոխա րինելու են գալիս նորերը, ծնվում ու լուծվում են նոր կոնֆլիկտներ:«Մի կյանքի պատմություն» վեպում, սակայն, Զորյանը հետապնդել է ավելի լայն գեղարվեստական խնդիր, քան մեկ անհատի կենսագրու թյան կամ թեկուզ երեխայի հոգեբանության բացահայտումն է: «Այդ գրքում իմ նպատակն է

եղել՝ տալ իմ պատանության օրերի հասարակական կյանքի այս-այն երևույթը, նկատի առնելով կատարված բնորոշ փաստեր, և ոչ թե նկարագրել եմ ինձ կամ հարազատներիս»,— պարզաբանում է հեղինակը: Վեպի ուշադիր ընթերցումը երևան է հանում ժամանակի հասարակության սոցիալական, հասարակական ու քաղաքական խնդիրները: Գրողը վարպետորեն է պատկերել մարդկանց սեփականա տիրական կրքերը, որոնք աղավաղում են նրանց հոգեբանությունը: Նույնքան իրական ու տեսանելի են ցարիզմի քաղաքականության հեան վանքները: Երեխաները չեն կարող մայրենի լեզվով դպրոց հաճախել և ստիպված են բավարարվել Զաքար վարժապետի դպրոցով:

ՎԵՐՀՈՒՇԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կան գրողներ, որոնց անունը տալիս անմիջապես պատկերացնում ես ուրույն անկրկնելի մի աշխարհ, որը թեև հա վերժորեն եղել է նրանցից առաջ և հավիտենորեն գոյություն կունենա նրանցից հետո, բայց որն իր առանձնահատուկ գեղեցկություններով, բոլորին հայտնի է նրանց անունով և նրանց շնորհիվ:

Այդպիսի գրող է հայ արձակի նշանավոր դեմքերից մեկը՝ Ակսել Բակունցը, որը գրականություն մուտք գործեց՝ իր երելով զանգեզուրյան բնաշխարհի նախնական վայրի պատկերները, լեռներում ապրող պարզ ու անապական մարդկանց հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգությունների պատմությունները:

Բակունցի հերոսները հիմնականում լուռ են:Սակայն այդ լռությունը չափից դուրս խոսուն է:Բակունցի մթնաձորյան աշխարհը մի կողմից բնութագրվում է հերոսների զգայական անտարբերությամբ,մյուս կողմից անսահման նրբությամբ,գեղեցկությամբ: <<Մթնաձորի չարքը>> պատմվածքում Սաքանը անընդհատ հիշում է Ասյային:Նրա հետ ունեցած մի հանդիպումը ճակատագրական է դառնում նրա համար: Չունեցածի Զգացողությունը մեծ տառապանք է պատճառում նրան,քանի որ մթնաձորի չարքը՝ Ասյան,չբացահայտված զգացողություններ է արթնացնում Սաքանի մեջ և գեղեցկության հակադրությունը,որը նրա կյանքն էր,նրան մի պահ թվում է անտանելի: Ողբերգությունը պատրաստ է,բայց տարբեր են իտակցման աստիճանները:Սաքանը անգամ բան ու գործի մեջ չի մոռանա Ասյային,իր հուշերի մթնաձորյան չարք,որն իր ներկայությամբ տակն ու վրա արեց վայրի լեռնականի հոգին:

Պատահական չէ ,որ թե խոնարհ աղջկա,թե եռոտանու առջև ծխի քուլաների մեջ գուշակություններ անող կնոջ գեղեցկությունը տեսնում և գնահատում են դրսի աշխարհի մարդիկ:

Ալպիական մանուշակը պատմածքում նկարիչը երազի իրականության,հուշի ու առկա գեղեցկությունների կրողն է:Կյանքը նրա համար արվեստի գեղեցկություն է: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

Կարմիր թելի նման անցնում է վերհուշը եվ նա հնձվորի կնոջը համեմատում է ծովափի այն կնոջ հետ,ով այնքան տարբեր եվ այնքան նման էր նրան:Հնձվորի կինը անպաշտպան գեղեցկություն է ինչպես լեռնային հրաշք ծաղիկը՝ ալպիական մանուշակը,որը կարող են նաև տրորել: Հակադրություն ների երրորդ շերտը վերաբերում է մի կողմից հուշի իրականությանը՝ ծովափի կնոջը, մյուս կողմից՝ առկա իրականությանը՝ հնձվորի կնոջը: Թեև հնձվորի կնոջ տեսքն է նկարչի մեջ արթնացնում ծովափի կնոջ վերհուշը, ու թեև այդ կերպարներն ունեն իրար լրացնող հատկանիշ ներ, այդուամենայնիվ՝ դրանք հակադիր ճակատագրի գեղեցկություն ներ են. «Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աթարի առաջ...»: Եվ, ի վերջո, ինչպես նշեցինք, հակադրություններ են նաև ծաղկի ճոճքի մեջ օրորվող բզեզի և կնոջ թիկունքին իջնող մահակի հարվածի պատկերները:

Միրհավը բակունցյան եզակի պատմվածքներից է,որի մեջ գեղեցկության հայտնագործությունը կատարվում է մթնաձորյան աշխարհում, այդ գեղեցկությունը դրսից եկած մարդու նկատածը չէ:

Դարձյալ գրեթե բառեր չկան պատկերվող սիրո համար: Կա միայն հաճելիորեն ջերմացնող տաք լռություն, որը սակայն հասկանալի լռու թյուն է, քանի որ և՛ Դիլանը, և՛ Սոնան Մթնաձորի մարդիկ են, լռու թյան օրենքով դաստիարտկված, և անխոս հասկանում են իրար: Միայն երկու կարճ երկխոսություն կա ամբողջ պատմվածքում.

— Բաղը մարդ կգա, Դիլա՛ն,— դողալով խնդրեց նա:

Ու չիմացավ գինուցն էր, թե հնձանն էր տաք,— Դիլան դային չի մացավ: Սոնայի ականջին շշնջաց.

- Կա՜ց, անխի՛ղճ...

Ահա և բոլորը, իսկ մնացածը այս պահի վերապրումն է, ներքին մենախոսություն և հիշողություն ինքն իր մեջ, որը սոսկ մի տեղ հատ վում է երկխոսությամբ. Դիլանը Սոնային առաջարկում է միասին ձի նստել, իսկ աղջիկն ասում է, որ մայրը խիստ պատվիրել է առանձին նստել: «Ինչո՞ւ»,— հարցնում է Դիլանը: «Ամոթ է»,— պատասխանում է աղջիկը:

Ամբողջ պատմվածքը հյուսված է ապրած կենսական վիճակների վերապրման ու կարոտի զգացողության մի այնպիսի ոճով, որը կեն դանացնում է ծերացած մարմինն ու հոգին, նաև ավելի տառապագին դարձնում սիրո վերհուշը, կյանքի հզոր սերը, այն ամենը, ինչի համար որ արժե ապրել այս աշխտրհում, քանի որ այդ վերապրմանն ուղեկցում է կյանքին հրաժեշտ տալու և կորուստի գիտակցությունը: Թե՛ տրամադրությամբ, թե՛ պատկերներով, թե՛ պատումի բնույթով ամբողջ պատմվածքը թողնում է ոգեղենացված բանաստեղծության տպավորություն: Աշնան ջինջ ու պայծառ օրվա նկարագրությունը, աշնան արևի տակ հանգստացող ու հեռու սարերին նայող Դիլանի կերպարը, նրա վերհուշը, հնձանը, Սոնան, մանկության տարիների նորոգվող կանչերը, արյունոտ թևերով միրհավը, անտառապահն ու նրա մտրակի շառաչը այնքան նրբորեն են միաձուլված, պատկերների անցումներն ու դեպքերի շղթան այնքան հեռու են վիպական արձակի հետևողական պատմողականությունից, որ Բակունցն անառարկելիորեն հասնում է արձակի բանաստեղծության գեղարվեստական նոր որակի:Հիշողության գունավոր թելերից աշնան արևի ճառագայթների հենքին նա հյուսում է Դիլանի կարոտների աշխարհը:

Եղիշե Չարենցը Ակսել Բակունցին՝

...Ե՛վ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջընջելի գրերն հնադարյան,—
Եվ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երկերի մաքուր սկիհներում պահված

Խորհուրդների համար մշտահրմա,

Որպես խորհուրդը մեր նաիրական ոգու,—

Քո «Միրհավի» համար— և լուսեղեն՝

Արփենիկի հուշով սրբագործված հավետ,

«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,

Որ բուրելու է հար աննյութեղեն...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ



Ստեղծագործությունների վերնագրեր	Ոտնահարված հերոսներ
«Մթնաձորի չարքը»	Սաքան
«Ալպիական մանուշակ»	Հնձվորի կինը
«Միրհավ»	Դիլան դային

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հուշագրությունը(հուշ,հիշողություն) գեղարվեստական գրականության ժանր է,անցյալի

հուշեր՝ շարադրված նկարագրվող իրադարձության ականատեսի կամ մասնակցի կողմից:Անհատի կյանքում տեղի ունեցած իրադարձությունների մասին անձնական կամ հանրային հուշերի ամբողջությունն է:Նկարագրվող դեպքերը դիտվում են իբրև փաստեր:Թեպետ պայմանականորեն հուշագրությունը համարվում է կենսագրության եվ ինքնակենսագրության ենթատեսակ,20-րդ դարի վերջերից ժանրի սահմանները առավել հստակ դարձան՝ ներկայացնելով առավել նեղ շրջանակ: Կենսագրությունը և ինքնակենսագրությունը ներկայացնում են մի կյանքի պատմությունը ամբողջակա-նորեն,մինչդեռ հուշագրությունը ներկայացնում է մի այնպիսի հատված կյանքից,որը նշանակալի և պատմականորեն վճռորոշ է եղել հեղինակի կյանքում: Չնայած այս սահմանումներին՝ մեր օրերում երբեմն խիստ դժվար է հստակեցնել հուշագրության,ինքնակենսագրության եվ վավերագրությունների սահմանները:

Յուրաքանչյուր հեղինակ անցնելիս ես առանձնահատուկ ուշադրություն եմ դարձնում

հուշագրությանը:

Տարիների փորձը ցույց է տվել,որ աշակերտները ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հատկապես այն հեղինակների նկատմամբ,որոնց կյանքի մանրամասնե-

րին ծանոթ են.

Օրինակ՝

1. Չարենցի ստեղծագործությունները և կենսագրությունը միահյուսված են իրար,իսկ Ժամանակակիցների հուշերը օգնում են ավելի հետաքրքրական եվ ուսանելի դարձնել այն:

2. Տերյանի մասին հուշերը վեր են հանում բանաստեղծի նուրբ ու քնքուշ պոեզիայի առանձնահատկությունները:

3. Ստեփան Զորյանի ինքնակենսագրական վեպը նպատակ է հետապնդում ոչ թե իր

կենսագրության մանրամասներ ներկայացնել,այլ իրողությունը ներկայացնել կենսագրության լույսի ներքո:

4. Սեվակի ողբերգական վախճանը ներկայացնող հուշերը օգնում են հասկանալ բանաստեղծի տողատակի չասածը,որը մինչ այդ անհասկանալի է:

5. Ակսել Բակունցի վերհուշը ավելի խորհրդավոր,ավելի ինքնատիպ է դարձնում կերպարների բացահայտումը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Եղիշե Հովհաննիսյան-<<Հուշեր Եղիշե Չարենցի մասին>>1986թ.

2.Դավիթ Գասպարյան-<<Ողբերգական Չարենցը>>1990թ.

3.Վահան Տերյան<<Ընտրանի>>2005թ.

4.Դավիթ Գասպարյան,Ժենյա Քալանթարյան<<Հայ գրականություն.Նորագույն շրջան>> X դաս.-ի դասագիրք

5.Ա.Եղիազարյան-<<Հայ գրականություն>>2011թ.XIIդաս.-ի դասագիրք

6.Հ.Մելքոնյան-<<Մերժված Օրենսդիր>> 2006թ.